# Դաս 2. Իմ երկիրը, մարզը և համայնքը

Լրացուցիչ նյութ

## Արցախ

*Արցախը Մեծ Հայքի 15 նահանգներից էր: Այս երկրամասն Արցախ է կոչվել մեզանից չորսուկես հազար տարի առաջ: Զրույցն ասում է, թե դա պապահել է այսպես. «Հայկ Նահապետին պեղեկացնում են, թե այս կողմերում հողը չի դիմանում ցանքերին: Ամենափոքրիկ անձրևից հողի վերին շերտը պոկվում է և հասուն արտերը ցեխակոլոլ դարձնում:*

*Հայկ Նահապետն իր որդուն՝ Արամանյակին, ուղարկում է այս երկրամաս և ասում.*

*– Գնա՛ և ծառ ու թուփ տնկել տուր: Միայն այդ դեպքում հողը դիմացկուն կդառնա և չի սահի:*

*Արամանյակը Հայոց աշխարհի այս ու այն կողմից ոստեր է հանում և տանում ու տնկում սահող հողերում:*

*Այդ ժամանակներում ծառին նաև ցախ էին ասում, ավելի շատ՝ ցախ, քան ծառ: Եվ մարդիկ իրար ասում էին.*

*– Արամանյակի ցախ, Արամանյակի ցախ:*

*Այդպես էլ երկիրը կոչվեց Արամանյակի ցախ, որը սեղմվեց ու դարձավ Արցախ»:*